ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԼՈՒՍԻՆԵ ՍԵՐՈԲՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան
Էլ.հասցե՝ ispiryanmariam@aspu.am

DOI: 10.24234/scientific.v1i51.313

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է ուսանողների ինտերնետային կախվածության մեխանիզմներին և դրա բազմակողմանի հետևանքների համապարփակ ուսումնասիրությանը: Վերլուծվում է, որ թվային տեխնոլոգիաները, ծառայելով որպես սոցիալականացման կարևոր գործիք, կարող են նաև հանգեցնել դիսֆունկցիոնալ վարքի, որը դրսևորվում է որպես ինտերնետային կախվածություն: Առանձնացվում են կախվածության զարգացման հիմնական մեխանիզմները՝ նեյրոկենսաքիմիական, սոցիալ-ճանաչողական, հուզական, վարքային, տեխնոլոգիական և շրջակա միջավայրի գործառույթները փոխկապակցված համակարգում:

Հատուկ ուշադրություն է դարձվում դոպամինային համակարգի ակտիվացմանը, սոցիալական ինքնաներկայացմանը, վիրտուալ միջավայրում արագ հետադարձ կապի ազդեցությանը և առցանց հաղորդակցության բնութագրերին: Ներկայացվում է նաև հիպերպերսոնալ հաղորդակցության տեսությունը, որի համաձայն առցանց փոխազդեցությունները կարող են դառնալ ավելի ինտենսիվ և հուզականորեն լիցքավորված՝ ընտրողական ինքնաներկայացման, զրուցակցի իդեալականացման և հաղորդակցության կառավարելիության պատճառով:

Ընդգծվում է, որ ինտերնետային կախվածությունը հատկապես տարածված է դեռահասների շրջանում և կարող է ունենալ բացասական սոցիալական, հոգեբանական, ֆիզիկական և կրթական հետևանքներ: Գիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ այս խնդիրը պահանջում է համապարփակ մոտեցում, ներառյալ արդյունավետ կանխարգելման և միջամտության ռազմավարությունների մշակումը:

Բանալի բառեր՝ *թվային տեխնոլոգիաներ, ուսանողներ, սոցիալականացում, ինտերնետային կախվածություն, մանկավարժական մեխանիզմներ, շրջակա միջավայրի գործոններ, սոցիալական մեկուսացում, սոցիալական ինքնություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թվային տեխնոլոգիաները հանդիսանալով անձի սոցիալականացման միջոց և իրականացնելով սոցիալական գործառույթ դրական ազդեցության հետ մեկտեղ հանդես է գալիս նաև ապագործառնական վարքագծի դրսևորմամբ՝ համացանցային կախվածության ախտանիշներով:

Վիրտուալ հաղորդակցության տեխնիկական առավելությունները, առանձնահատկությունները, լայն հնարավորությունները, իրական սոցիալական շփման փոխարինված գործառույթը աղավաղում են սոցիալական հաղորդակցման իրական պատկերը և բացասականորեն ազդեցություն թողնելով սովորողների սոցիալականացման գործընթացի վրա: Սովորողների համացանցային կախվածության վարքագիծը հանգեցնում է սոցիալական, հոգեբանական, մանկավարժական, տնտեսական, ֆիզիկական բացասական հետևանքների: Այս տեսանկյունից էլ անհրաժեշտ է դարձել բացահայտելու և բնութագրելու սովորողների համացանցային կախվածության մեխանիզմները:

Սովորողների համացանցային կախվածության մեխանիզմները ուսումնասիրվում են հոգեբանության, մանկավարժության, նյարդագիտության և սոցիոլոգիայի շրջանակներում: Գիտական գրականության մեջ համացանցային կախվածությունը դիտարկվում է որպես վարքային կախվածության տեսակ, որը ձևավորվում է մի շարք փոխկապակցված հոգեբանական, նյարդաբանական, սոցիալական և մանկավարժական մեխանիզմների ազդեցությամբ: Այս մեխանիզմների բացահայտումը կարևոր է կախվածության կանխարգելման և հաղթահարման արդյունավետ ռազմավարություններ մշակելու համար:

1. Նեյրոբիոքիմիական մեխանիզմներ

- Սովորողների համացանցային կախվածության պատճառներից են սթրեսոգեն փոփոխականները, քանի որ ունենալով պայքարի սահմանափակ կարողություններ, նրանց համար համացանցը վերածվում է հոգեկան լարվածության դեմ պայքարի հարմար միջոց, որի պարագայում նրանց ակտիվությունը հաճախ կապվում է Օրինակ, սոցցանցերի լայքերը, խաղերի հաջողությունները, մեսենջերում հաղորդագրությունների ստացումն առաջացնում են անհապաղ ճանաչողական և հուզական տոնուս, որը խթանում է համացանցի շարունակական օգտագործումը: Համացանցի թվացյալ անանությունը նույնպես հրապուրիչ տեսանկյուն է սովորողների համար, որը նրանց հնարավորություն է տալիս ներգրրավվել այնպիսի վարքագծերում,որոնա այլապես անհասանելի են իրական կյանքում:

- Դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համացանցային օգտագործման ընթացքում ակտիվանում են նաև նախասրտային (prefrontal cortex) և պուտամեն (putamen) նյարդային կենտրոնները, որոնք պատասխանատու են պարգևատրման գործընթացների վերահսկման և ինքնակառավարման համար (Brand et al., 2014; Kuss & Griffiths, 2015).

դոպամինային համակարգի ակտիվացման հետ:

2. Սոցիալ-ճանաչողական մեխանիզմներ.

- Սովորորողները հիմնականում զարգացնում են ցանցային ինքնաիմիջ և սոցիալական ինքնահաստատման ձևեր, որտեղ համացանցը դառնում է ինքնագնահատականը բարձրացնելու և ընդունվածության զգացողությունը ապահովելու գործիք:

- **Վիրտուալ հասարակական միջավայրում ստացված արագ և անմիջական արձագանքները** խթանում են շարունակական մուտք ու օգտագործում, ինչը խանգարում է ռեալ աշխարհի սոցիալական կապերի կառուցմանը (Caplan, 2007; Davis, 2001).

3. Ուսումնական մեխանիզմներ

- դեռահասն ակամայից կանցնի սոցցանցեր,խաղեր կամ հոսքային հարթակներ,
- շատ դեպքերում համացանցային գործունեությունը դիտվում է հիպոթետիկ ու կանոնավոր պահանջների գործընթաց, երբ արտաքին կամ ներքին ազդակները (օրինակ՝ հեռախոսը զանգում է, կամ ձանձրույթը) անմիջապես հրահրում են համացանցային օգտագործումը (Meerkerk et al., 2009).

5. Հուզական և ճանաչողական մեխանիզմներ.

- սովորողների համար համացանցը հաճախ ծառայում է որպես հուզական զսպման և սթրեսի կրճատման միջոց:

6. Առանձնակի կամ ոչ իրական կապերը սոցիալական ցանցերում:

Օրինակ, սովորողը կարող է ունենալ բազմաթիվ «փոքր» ընկերական կամ խմբային թույլ կապեր, առանց խորքային համագործակցության կամ զգալի ազդեցության: Այս դեպքում խոսքը գնում է այն կապերի մասին, որոնք իրական չեն՝ կապված սոցիալական, հաղորդակցական կամ տեղեկատվական մոդելների հետ:Հիմնականում նկատի են առնվում այն իրավիճակները, երբ կապերը ձևավորվում են թվային միջավայրում, բայց չեն արտացոլում իրական կյանքի իրական հարաբերություններն ու սոցիալական ազդեցությունը: Այդպիսի կապերը թույլ են տալիս խուսափել նեղացածությունից, դեպրեսիայից կամ

անհամապատասխանությունից, ինչը հանգեցնում է ռեալ կյանքի խնդիրներից փախուստի և կախվածության խորացման (Andreassen et al., 2012).

7. Կառուցվածքային և տեխնոլոգիական մեխանիզմներ.

• Համակարգչային հարթակները, խաղային մեխանիկաները, հաղորդագրությունների մշտական ազդանշանները խթանում են համացանցի օգտագործման շարունակականությունը:

• Այս մեխանիզմները ակտիվացնում են սովորողների սպասելիքի և անկանխատեսելի պարգևատրման համակարգերը, որոնք անմիջականորեն կապված են նեյրոբիոքիմիական գործընթացների հետ՝ ստեղծելով կախվածության ուժեղացման վտանգ (King et al., 2010).

8. Իրավիճակային ու միջավայրային գործոններ.

• Ընտանիքի, դպրոցի և ընկերական միջավայրի աջակցությունը կամ բացակայությունը մեծապես ազդում է սովորողների համացանցային վարքի վրա:

• Այն սովորողները, ովքեր ունեն սոցիալական մեկուսացում կամ վատ հուզական վերահսկողություն, հաճախ են օգտագործում համացանցը որպես փախուստի և ինքնահաստատման ուղի, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում կախվածության առաջացման համար (Kardefelt-Winther, 2014).

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերը բնութագրված մեխանիզմները փաստում են, որ համացանցային կախվածությունը բազմաշերտանի է. այն ձևավորվում է նեյրոբիոքիմիական, ճանաչողական-սոցիալական, հուզական և տեխնոլոգիական մեխանիզմների փոխազդեցությամբ: Ընդհանուր մեխանիզմների ըմբռնումը կարևոր է կանխարգելման, ժամանակին միջամտության և բուժման ծրագրերի մշակման համար:

Հետազոտությունները ցույց են տվել, որ հայ դեռահասների համացանցային կախվածությունը առավելապես պատճառաբանվում է հաղորդակցական առանձնահատկություններով: Մի շարք տեսաբաններ պնդում են, որ համացանցային հաղորդակցության առանձնահատուկ հնարավորություններն առցանց շփվողներին թույլ են տալիս սոցիալական տեսանկյունից ավելի հաջողակ լինել առցանց ռեժիմում, քան առերես շփման ժամանակ:

Սովորողների համացանցային կախվածությունը դիտարկվել է սոցիալական ինքնության տեսության գաղափարախոսների կողմից: Ըստ այդ տեսության՝ համակարգչային հաղորդակցության անանուն կամ անհատականացված պայմաններում զարգանում է անձի սոցիալական ինքնությունը և ամրապնդվում են խմբահեն կապերը:

Հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ համացանցային կախվածության մեխանիզմները դիտարկվում են նաև հիպերանձնային տեսության համատեքստում, ըստ որի՝ առցանց շփումները մեղմում են սովորողների ճանաչողական պահանջմունքները՝ նրանց դարձնելով ավելի ինքնավստահ. նրանք ծախսելով մեծածավալ ճանաչողական ռեսուրսներ՝ բարելավում են իրենց դրական ինքնաներկայացման հնարավորություններն ու միջանձնային հարաբերությունները:

Այս տեսության հեղինակը ամերիկացի հաղորդակցաբան Ջ. Բ. Վալթերն է: Նա իր «Համակարգչային միջնորդավորված հաղորդակցություն. ապանձնային, միջանձնային և հիպերանձնային փոխազդեցություն» խորագրով իգիտական հոդվածում նշում է, որ համակարգչային կամ համացանցային միջնորդավորված հաղորդակցությունը (CMC) երբեմն կարող է լինել նույնիսկ ավելի ինտենսիվ և հուզական, քան իրական (face-to-face) շփումը:

Ընդ որում առցանց հաղորդակցությունը կարող է դառնալ «հիպերանձնային», քանի որ. «Համակարգչային միջնորդավորված հաղորդակցությունը կարող է դառնալ հիպերանձնային, քանի որ այն հաղորդակցվողներին հնարավորություն է տալիս օպտիմալացնել իրենց ինքնաներկայացումը և ընդգծել իրենց սոցիալապես ցանկալի հատկանիշները» (Walther, 1996): Այսինքն՝ համացանցային միջավայրում.

- մարդիկ կարող են անել ընտրողական ինքնաներկայացում (ցույց տալ միայն իրենց ցանկալի կողմերը),
- մյուսները հակված են իդեալականացնել զրուցակցին,
- հաղորդագրությունները կարելի է մտածված ձևակերպել և խմբագրել,
- առաջանում է փոխադարձ ուժեղացող շփման շրջան (feedback loop), որը մեծացնում է մտերմության զգացումը:

Այս ամենը կարող են ուժեղացնել առցանց շփման գրավչությունը և նպաստել համացանցային կախվածության ձևավորմանը:

Ջ. Բ. Վալթերի դիտարկմամբ՝ թվային միջավայրում հաղորդակցվող սուբյեկտը վերահսկում է տեղեկատվության ծավալն ու բովանդակությունը, ինչի արդյունքում ձևավորվում է սոցիալ-հոգեբանական «ուժեղացված» կապ: Այս մեխանիզմը կարող է մեծացնել առցանց փոխազդեցության հուզական արժեքը և նպաստել կրկնվող ներգրավվածությանը:

Ջ. Բ. Վալթերը տվել է հիպերանձնային հաղորդակցության 4 հիմնական մեխանիզմները՛

1. Ընտրողական ինքնաներկայացում

Առցանց միջավայրում անհատը կարող է վերահսկել այն տեղեկատվությունը, որը ներկայացնում է իր մասին: Նա հաճախ ցույց է տալիս միայն իր դրական, սոցիալապես ընդունելի հատկանիշները՝ թաքցնելով թերությունները:

2. Զրուցակցի իդեալականացում

Սահմանափակ հաղորդակցական ազդակների պատճառով զրուցակիցը հակված է լրացնել տեղեկատվության բացերը սեփական պատկերացումներով՝ հաճախ ձևավորելով իդեալականացված պատկեր:

3. Վերահսկելի հաղորդակցության իրականուցում

Առցանց հաղորդակցության ժամանակ հաղորդագրությունները հնարավոր է մտածված կազմել, խմբագրել և վերահսկել: Սա թույլ է տալիս հաղորդակցությունը դարձնել ավելի «կատարյալ» և սոցիալապես արդյունավետ:

4. Հետադարձ կապի ուժեղացման շրջան

Ընտրողական ինքնաներկայացումը և զրուցակցի իդեալականացումը փոխադարձաբար ուժեղացնում են միմյանց: Արդյունքում ձևավորվում է դրական հետադարձ կապի շրջան, որը խորացնում է հաղորդակցության հուզական ինտենսիվությունը:

Այս մեխանիզմների համատեքստում էլ դրանք դառնում են համացանցայինկախվածության հիմնական ռիսկային գործոններ:

Հետագայում զարգացնելով հիպերանձնային հաղորդակցության տեսությունը՝ Ջ. Բ Վալթերը և Մ. Ռ. Պարկսը իրենց «Հաղորդակցական ազդակների կորուստ և վերականգնում. համակարգչային միջնորդավորված հաղորդակցությունը և հարաբերությունները» աշխատությունում նշում են. «Համակարգչային միջնորդավորված հաղորդակցության մասնակիցները հարմարվում են սոցիալական ազդակների սահմանափակությանը և մշակում են ռազմավարություններ, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ իրականացնել միջանձնային հաղորդակցությունը»(Walther & Parks, 2002):

Արտեմիո Ռամիրես կրտսերի և Շուանգյուե Ժանի կարծիքով. «Համակարգչային միջնորդավորված հաղորդակցությունից դեպի դեմառդեմ շփման անցումը կարող է հաստատել կամ կասկածի տակ դնել այն սպասումները, որոնք ձևավորվել են առցանց փոխազդեցության ընթացքում»(Ramirez & Zhang, 2007): Ընդ որում. «Համակարգչային միջնորդավորված հաղորդակցության միջավայրերը հնարավորություն են տալիս մարդկանց մտածված ձևակերպել հաղորդագրությունները և վերահսկել այն տպավորությունը, որը ստեղծվում է զրուցակցի մոտ»(Ramirez & Zhang, 2007):

Այսպիսով հիպերանձնային տեսությունը, հանդիսանալով համացանցային կախվածության տեսական հիմքի կարևոր տարր, թույլ է տալիս կանխատեսել առցանց վարքագծային մեխանիզմները, բացատրել համակարգչային միջնորդավորված հաղորդակցության առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ այն ընդգծում է, որ հաղորդակցվողները կիրառում են ընտրողական ինքնաներկայացում, զրուցակիցը իդեալականացնում նրանց, հաղորդակցությունն ունի վերահսկվող կառուցվածք, և ձևավորվում է պատասխանական հետադարձ կապի ուժեղացվող շրջան, որոնք միասին խթանում են հաղորդակցության հուզական և սոցիալական ներգրավվածությունը:

Այս տեսական մոտեցումներն հաստատեցին Ս.Կապլանի այն բնորոշումը, որ սոցիալական շփումը նախընտրող անհատները վերջինիս նկատմամբ վստահություն են ձեռք բերում, ինչը կարող է հանգեցնել համացանցի խնդրահարույց օգտագործման այլ ախտանաշանների ի հայտ գալուն, ինչպիսիք են համացանց մուտք գործելը՝ տրամադրությունը փոխելու նպատակով, ճանաչողական կախվածությունը, կոմպուլսիվ օգտագործումը և այլ բացասական հետևանքներ: Համացանցի խնդրահարույց օգտագործման երկու կարևորագույն հատկանիշներն են՝ համացանցը որպես տրամադրության կարգավորիչ օգտագործելու շահադրդումը և ճանաչողական կախվածությունն առցանց աշխարհից:

Այսպիսով կատարված հետազոտության արդյունքները փաստում են, որ սովորողների համացանցային կախվածությունը բազմաշերտ և բարդ սոցիալ-հոգեբանական երևույթ է, որը ձևավորվում է տարբեր մեխանիզմների փոխազդեցությամբ՝ ընդգրկելով նեյրոբիոքիմիական, ճանաչողական, հուզական, սոցիալական և տեխնոլոգիական գործոններ: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ համացանցային միջավայրը ոչ միայն բավարարում է հաղորդակցական և ինքնահաստատման պահանջմունքները, այլև ստեղծում է կախվածության խորացման բարենպաստ պայմաններ:

Հիպերանձնային հաղորդակցության տեսության շրջանակներում բացահայտված մեխանիզմները (ընտրողական ինքնաներկայացում, զրուցակցի իդեալականացում, հաղորդակցության վերահսկելիություն և հետադարձ կապի ուժեղացման շրջան) էական դեր են խաղում առցանց ներգրավվածության աճի և կախվածության ձևավորման գործընթացում:

Արձանագրվում է նաև, որ համացանցը հաճախ օգտագործվում է որպես հուզական կարգավորման և սոցիալական դժվարություններից փախուստի միջոց, ինչը կարող է հանգեցնել իրական սոցիալական կապերի թուլացման և անձի սոցիալականացման խաթարման:

Ուստի, անհրաժեշտ է մշակել գիտականորեն հիմնավորված կանխարգելիչ և միջամտային ծրագրեր, որոնք ուղղված կլինեն սովորողների մեդիագրագիտության զարգացմանը, ինքնակարգավորման հմտությունների ձևավորմանը և առողջ սոցիալական միջավայրի ապահովմանը՝ ինչպես ընտանիքում, այնպես էլ կրթական հաստատություններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Andreassen C. S., Torsheim T., Brunborg G. S., & Pallesen S. (2012). Development of a Facebook addiction scale. *Psychological Reports, 110*(2), 501–517. https://doi.org/10.2466/02.09.18.PR0.110.2.501-517

Beard K. W. (2008). Internet addiction in children and adolescents. In C. B. Yarnall (Ed.), *Computer science research trends* (pp. 59–70). Nova Science Publishers.

Block J. (2007). Prevalence underestimated in problematic Internet use study. *CNS Spectrums, 12*(14), 14–15.

Bogost I. (2012). Pretty hate machines: A review of gameplay mode. *Game Studies, 12*(2).

Brand M., Young K. S., Laier C., Wölfling K., & Potenza M. N. (2016). Integrating psychological and neurobiological considerations regarding the development and maintenance of specific Internet-use disorders: An Interaction of Person-Affect-Cognition-Execution (I-PACE) model. *Neuroscience & Biobehavioral Reviews, 71*, 252–266. https://doi.org/10.1016/j.neubiorev.2016.08.033

Caplan S. E. (2007). Relations among loneliness, social anxiety, and problematic Internet use. *Computers in Human Behavior, 23*(3), 985–1002. https://doi.org/10.1016/j.chb.2005.08.001

Davis R. A. (2001). A cognitive-behavioral model of pathological Internet use. *Computers in Human Behavior, 17*(2), 187–195. https://doi.org/10.1016/S0747-5632(00)00041-8

Kardefelt-Winther D. (2014). A conceptual and methodological critique of Internet addiction research: Towards a model of compensatory Internet use. *Computers in Human Behavior, 31*, 351–354. https://doi.org/10.1016/j.chb.2013.10.059

King D. L., Delfabbro P. H., & Griffiths M. D. (2010). The role of structural characteristics in problematic video game play: A systematic review. *International Journal of Mental Health and Addiction, 8*(2), 90–106. https://doi.org/10.1007/s11469-009-9206-4

Kuss D. J., & Griffiths M. D. (2015). *Internet addiction in psychotherapy*. Palgrave Macmillan.

Meerkerk G. J., Van Den Eijnden R. J. J. M., Vermulst A. A., & Garretsen H. L. (2009). The compulsive Internet use scale (CIUS): Some psychometric properties. *CyberPsychology & Behavior, 12*(1), 1–6. https://doi.org/10.1089/cpb.2008.0181

Ramirez A., Jr., & Zhang S. (2007). When online meets offline: An expectancy violations theory perspective on modality switching. *Communication Monographs, 74*(1), 2–23. https://doi.org/10.1080/03637750601150943

Walther J. B. (1996). Computer-mediated communication: Impersonal, interpersonal, and hyperpersonal interaction. *Communication Research, 23*(1), 3–43. https://doi.org/10.1177/009365096023001001

Walther J. B., & Parks M. R. (2002). Cues filtered out, cues filtered in: Computer-mediated communication and relationships. In M. L. Knapp & J. A. Daly (Eds.), *Handbook of interpersonal communication* (3rd ed., pp. 529–563). Sage Publications.

РЕЗЮМЕ

МЕХАНИЗМЫ И ПОСЛЕДСТВИЯ ИНТЕРНЕТ-ЗАВИСИМОСТИ У СТУДЕНТОВ

ЛУСИНЕ СЕРОБЯН

Статья посвящена всестороннему исследованию механизмов интернет-зависимости обучающихся и её многоаспектных последствий. Анализируется, что цифровые технологии, являясь важным инструментом социализации, одновременно могут порождать дисфункциональное поведение, проявляющееся в форме интернет-зависимости. Выделяются основные механизмы формирования зависимости — нейробиохимические, социально-когнитивные, эмоциональные, поведенческие, технологические и средовые, функционирующие во взаимосвязанной системе.

Особое внимание уделяется активации дофаминовой системы, социальному самопрезентированию, влиянию быстрой обратной связи в виртуальной среде и особенностям онлайн-коммуникации. Представляется также теория гиперперсональной коммуникации, согласно которой онлайн-взаимодействие может становиться более интенсивным и эмоционально насыщенным за счёт селективной самопрезентации, идеализации собеседника и управляемости коммуникации.

В статье подчёркивается, что интернет-зависимость особенно распространена среди подростков и может иметь негативные социальные, психологические, физические и образовательные последствия. Анализ научной литературы показывает, что данная проблема требует комплексного подхода, включающего разработку эффективных стратегий профилактики и вмешательства.

Ключевые слова: *цифровые технологии, обучающиеся, социализация, интернет-зависимость, педагогические механизмы, средовые факторы, социальная изоляция, социальная идентичность.*

SUMMARY

MECHANISMS AND CONSEQUENCES OF INTERNET ADDICTION AMONG STUDENTS

LUSINE SEROBYAN

The article is devoted to a comprehensive study of the mechanisms of students' internet addiction and its multifaceted consequences. It is analyzed that digital technologies, while serving as an important tool of socialization, can simultaneously generate dysfunctional behavior manifested in the form of internet addiction. The main mechanisms of addiction formation are identified, including neurobiochemical, socio-cognitive, emotional, behavioral, technological, and environmental factors, which operate within an interconnected system.

Special attention is paid to the activation of the dopaminergic system, social self-presentation, the impact of rapid feedback in the virtual environment, and the features of online communication. The theory of hyperpersonal communication is also presented, according to which online interaction can become more intense and emotionally rich due to selective self-presentation, idealization of the interlocutor, and the controllability of communication.

The article emphasizes that internet addiction is particularly widespread among adolescents and may have negative social, psychological, physical, and educational consequences. The analysis of scientific literature shows that this issue requires a comprehensive approach, including the development of effective prevention and intervention strategies.

***Keywords**: digital technologies, learners, socialization, internet addiction, pedagogical mechanisms, environmental factors, social isolation, social identity.*

Հոդվածը ստացվել է՝ 19.02. 2026

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 22.02. 2026

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 27.03.2026